

Հաստատված է
ՔՐԵԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԵՎ ՔՐԵԱԲԱՆՈՒԹՅԱՆ
 ամբիոնի 31.08.2020թ. նիստում (արձ. թիվ 1)
 Ամբիոնի պետի ժ/պ _____ Հ.Խաչատրյան
 31.08.2020թ.

**ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐ
 ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐ**

ԱՌԱՐԿԱՅԻ ԱՆՎԱՆՈՒՄ	Հակակոռուպցիոն քաղաքականության հիմնահարցեր
ՖԱԿՈՒԼՏԵՏ	Մագիստրատուրա, առկա ուսուցում
ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ	Իրավագիտություն
ԱՍԲԻՈՆ	Քրեական իրավունքի և քրեաբանության ամբիոն E-mail: qreakan@mail.ru
ՀԵՂԻՆԱԿ/ՆԵՐ	Ս. Գալյան E-mail: Srbgalyan@gmail.com , հեռ. 093 58 51 58
ՈՒՍՏԱՐԻԿԻ ՄԱՍՅԱԿ	2-րդ կուրս, 3-րդ կիսամյակ
ԿՐԹԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆ	մագիստրատուրա

ԿՐԵՂԻՏՆԵՐ	2 (երկու)
ԴԱՍԱԺԱՍԵՐԻ ԲԱՇԽՈՒՄ ԵՎ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՀԵՏ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՁԵՎԵՐԸ	<p>«Հակակոռուպցիոն քաղաքականության հիմնահարցեր» դասընթացի ընդհանուր ծավալը կազմում է 60 ժամ, որից 12 ժամ դասախոսություն, 4 ժամ սեմինար պարապմունք, 44 ժամ ինքնուրույն աշխատանք:</p> <p>Ինքնուրույն աշխատանքի համար նախատեսված ժամերին սովորողը կատարում է գրականության ընթերցում և մշակում, վերլուծական, հետազոտական աշխատանք, դասախոսի հանձնարարությամբ կարող է գրել ռեֆերատներ և էսսեներ, պատրաստվում է հաջորդ դասին: Լսարանային դասերը կայանում են շաբաթը մեկ լսարանային ժամ տևողությամբ: Դասընթացն ավարտվում է կիսամյակի վերջում ստուգարք հանձնելով:</p>
ՄՈՒՏՔԱՅԻՆ ՊԱՀԱՆՁՆԵՐ	Դասընթացը կառուցվում է «ՀՀ քրեական իրավունք», «Կրիմինալոգիա» դասընթացների իմացության վրա:
ՀԱՄԱՌՈՏ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ	Դասընթացի շրջանակներում ուսումնասիրվում են հակակոռուպցիոն ոլորտի օրենսդրության, հակակոռուպցիոն ինստիտուցիոնալ համակարգի, կոռուպցիայի կանխարգելման, հանրային ծառայության համակարգերի, ներդրված հակակոռուպցիոն գործիքներն օգտագործելու միջոցով կոռուպցիան կանխարգելելու և կոռուպցիոն հանցագործությունների բացահայտման կարողությունների ձևավորմանն առնչվող հարցերը:

<p>ՆՊԱՏԱԿ</p> <p>ԽՆԴԻՐՆԵՐ</p>	<p>Դասընթացի նպատակն է սովորողներին հաղորդել գիտելիքներ հակակոռուպցիոն քաղաքականության, այդ թվում՝ հակակոռուպցիոն ռազմավարության, կոռուպցիայի կանխարգելման, հայտարարագրման համակարգի, հակակոռուպցիոն մարմինների լիազորությունների և գործիքակազմի վերաբերյալ, ինչպես նաև ձևավորել ներդրված հակակոռուպցիոն գործիքներն օգտագործելու միջոցով կոռուպցիան կանխարգելելուն և կոռուպցիոն հանցագործությունների բացահայտմանն ուղղված կարողություններ:</p> <p>Դասընթացի խնդիրներն են՝</p> <ul style="list-style-type: none"> • ներկայացնել հակակոռուպցիոն ոլորտի հիմնական օրենսդրությունը և դրա պրակտիկ կիրառման առանձնահատկությունները. • ներկայացնել հակակոռուպցիոն ինստիտուցիոնալ համակարգը. • ներկայացնել հանրային ծառայության համակարգը. • ներկայացնել հայտարարագրման համակարգը. • ներկայացնել հակակոռուպցիոն ոլորտի վերջին զարգացումները. • գործնականում կիրառել կոռուպցիայի դեմ պայքարի գործիքները:
<p>ԿՐԹԱԿԱՆ ԵՒ ՔԱՅԻՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ</p> <p><i>Կարողանա՝</i></p>	<ol style="list-style-type: none"> 1. վերլուծել հակակոռուպցիոն ոլորտի օրենսդրությունը, վեր հանել առկա բացերը. 2. սահմանել հակակոռուպցիոն ռազմավարությամբ սահմանված հակակոռուպցիոն քաղաքականության հիմնական ուղղությունները. 3. սահմանել Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի հիմնական գործառնությունները, գործունեության առանձնահատկությունները, վարույթների հարուցումը. 4. վերլուծել զույթի, եկամուտների և շահերի հայտարարագրերը, վեր հանել ռիսկերը. 5. սահմանել բարեվարքության համակարգի հիմնական տարրերը. 6. մատնանշել կոռուպցիայի դեմ պայքարի ոլորտում իրականացվող հիմնական միջոցառումները. 7. օգտագործել կոռուպցիայի դեմ պայքարի նպատակով ներդրված տեղեկատվական տեխնոլոգիաները և նորարարական լուծումները:

<p>ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ</p>	
<p>Հիմնական</p>	<ol style="list-style-type: none"> 1. Ամբիոնի կողմից մշակված դասախոսությունները 2. ՀՀ քրեական օրենսգիրք 3. «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» ՀՀ օրենք, 2017 թ. 4. ՀՀ կառավարության 2019 թվականի հոկտեմբերի 3-ի «Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն ռազմավարությունը և դրա իրականացման 2019-2022 թվականների միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» N 1332-Ն որոշում 5. «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենք, 2018 թ.

	6. «Ազդարարման համակարգի մասին» ՀՀ օրենք, 2017 թ. 7. «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» ՀՀ օրենք, 2020 թ.
Լրացուցիչ	

ԳՆԱՀԱՏՄԱՆ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐ ԵՎ ԿՇԻՌ	Ստուգարք (ստուգված, չստուգված)
ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ / ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐ	<p>Սովորողը դասընթացից կարող է հանդես բերել մինչև 100% (ստուգված) առաջադիմություն:</p> <p>Սովորողների գիտելիքները, ունակությունները և հմտությունները գնահատվում են «Գերազանց», «Լավ», «Բավարար» և «Անբավարար» կամ «Ստուգված» կամ «Չստուգված»:</p> <p>Սովորողների գիտելիքները գնահատվում են հետևյալ չափանիշներով՝</p> <p>ա) «Գերազանց», եթե ունկնդիրը խոր և հիմնավոր է յուրացրել ամբողջ ծրագրային նյութը, սպառիչ, հաջորդական, գրագետ ու տրամաբանորեն կառուցված է շարադրում այն, նյութը սերտորեն կապում է ուստիկանության ծառայության խնդիրների հետ, չի դժվարանում պատասխանել, երբ ձևավորվում է առաջադրանքը, ազատորեն լուծում է խնդիրներն ու կատարում գործնական առաջադրանքները, ճիշտ է հիմնավորում ընդունած որոշումները, ընդունակ է ինքնուրույն ընդհանրացնել և շարադրել նյութը՝ սխալներ թույլ չտալով:</p> <p>բ) «Լավ», եթե սովորողը հիմնավոր գիտի ծրագրային նյութը, գրագետ է և ըստ էության շարադրում է այն, հարցին պատասխանելիս թույլ չի տալիս էական անճշտություններ, կարողանում է ճիշտ կիրառել տեսական դրույթները, գործնական առաջադրանքները կատարելիս տիրապետում է անհրաժեշտ ունակությունների ու հմտությունների:</p> <p>գ) «Բավարար», եթե սովորողը յուրացրել է միայն հիմնական նյութը, բայց չգիտի դրա առանձին մանրամասները, թույլ է տալիս անճշտություններ, ոչ ճիշտ ձևակերպումներ, խախտում է ուսումնական նյութի շարադրման հաջորդականությունը և դժվարանում է կատարել գործնական առաջադրանքները:</p> <p>դ) «Անբավարար», եթե սովորողը չգիտի ծրագրային նյութի զգալի մասը, թույլ է տալիս էական սխալներ, չի կարողանում կատարել գործնական առաջադրանքներն ու լուծել խնդիրները:</p>
ԱՅԼ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ	
Ներկայություն	<p>Դասապլանի որևէ փոփոխություն նախօրոք կտեղեկացվի սովորողին:</p> <p>Սովորողի դասերին ներկայությունը բխում է նրա իսկ շահերից, քանի որ ներկայությունը ենթադրում է ունկնդրում, մասնակցություն քննարկումներին, չհասկացված կամ վատ հասկացված խնդիրների պարզաբանում, ինքնուրույն աշխատանքների հանձնում: Սովորողն այս դեպքում հնարավորություն է ունենում լսել ոչ միայն ծրագրային նյութը, այլև մասնակցել քննարկումներին, բանավեճերին, անել ինքնուրույն դատողություններ և հայտնել սեփական տեսակետը:</p>

<p>Գրավոր աշխատանքների ներկայացվող պահանջներ</p>	<p>Գրավոր աշխատանքների ժամանակ արգելվում է ծածկագրերից օգտվելը: Ծածկագրի հայտնաբերման դեպքում աշխատանքը գնահատվում է զրո միավոր:</p>
<p>Ինքնուրույն և գործնական աշխատանքներ</p>	<p>Ինքնուրույն աշխատանքները անհրաժեշտ է կատարել առանց կողմնակի միջամտության և հանձնել դրանք նշված ժամանակահատվածում: Ինքնուրույն աշխատանքում արգելվում է գրագողությունը: Այլոց մտքերը օգտագործելու դեպքում սովորողը պարտավոր է նշել աղբյուրը ըստ ընդունված ակադեմիական ձևաչափի:</p>

ԹԵՄԱՏԻԿ ՏՐՈՂՄԱՆ ՔԱՐՏԵԶ

Թեմա 1 Հակակոռուպցիոն ոլորտի օրենսդրությունը և հակակոռուպցիոն ինստիտուցիոնալ համակարգը (4 ժամ դասախոսություն, 1 ժամ սեմինար պարապմունք)	
Թեմայի հարցերը	Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն
<p>1. «Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն ռազմավարությունը և դրա իրականացման 2019-2022 թվականների միջոցառումների ծրագրի հիմնական ուղղությունները և խոշոր միջոցառումները</p> <p>2. Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն ռազմավարության նախանշված ինստիտուցիոնալ համակարգը</p> <p>3. Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձումը և դրա առանձնահատկությունները</p> <p>4. Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի իրականացված կարգավիճակը, գործառույթները և այլ մարմինների հետ համագործակցությունը</p>	<p>Հարցեր 1-4 – ներկայացվում է դասախոսություն՝ սովորողների ուշադրությունը հրավիրելով առանցքային և խնդրահարույց հարցերի վրա: Հարցեր 1-4– ինքնուրույն աշխատանք, սովորողները ծանոթանում են գրականությանը՝ տվյալ հարցերի վերաբերյալ ավելի խորը գիտելիքներ ձեռք բերելու համար և պատրաստվում են սեմինար պարապմունքին՝ նախապատրաստելով քննարկված իրավական ակտերից որևէ մեկի օրենսդրական բացերի վերաբերյալ տեղեկանք, դրանց շտկման նպատակով կազմված օրենքի նախագծերը և հիմնավորումները: Հարցեր 1-4 – անցկացվում է սեմինար պարապմունք, որի ընթացքում սովորողները ներկայացնում են իրենց կողմից պատրաստված օրենքի նախագծերը և հիմնավորումները, կատարվում է դրանց խմբային քննարկում:</p>

Թեմա 2 Կոռուպցիայի կանխարգելումը և դրա հիմնական տարրերը, ազդարարման համակարգ (6 ժամ դասախոսություն)	
Թեմայի հարցեր	Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն
<p>1. Կոռուպցիայի կանխարգելման հիմնական տարրերը.</p> <p>2. Գույքի, եկամուտների, շահերի հայտարարագրում.</p> <p>3. Հայտարարագրերի ստուգումը և վերլուծությունը.</p> <p>4. Բարեվարքության ուսումնասիրությունը.</p> <p>5. Ազդարարման տեսակները և եղանակները.</p>	<p>Հարցեր 1-5 – ներկայացվում է դասախոսություն:</p>

Թեմա 3 Հակակոռուպցիոն ոլորտի նոր նախաձեռնությունները և տեղեկատվական տեխնոլոգիաների և նորարարական լուծումների դերը կոռուպցիայի դեմ պայքարում
--

(2 ժամ դասախոսություն, 1 ժամ սեմինար պարապմունք)	
Թեմայի հարցեր	Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն
<p>1. Հակակոռուպցիոն ոլորտի խոշոր օրենսդրական նախաձեռնությունները.</p> <p>2. Տեղեկատվական տեխնոլոգիաների և նորարարական լուծումների դերը կոռուպցիայի դեմ պայքարում (հայտարարագրերի էլեկտրոնային համակարգ e-draft.am, azdararir.am, e-hotline.am, e-register.am)</p>	<p>Հարցեր 1-2 - անցկացվում է դասախոսություն:</p> <p>Հարցեր 1-2 - ինքնուրույն աշխատանք. ուսանողները ծանոթանում են տեղեկատվական տեխնոլոգիաների օգտագործման եղանակներին, հայտարարագրերի և ռեգիստրի էլեկտրոնային համակարգերի սվյալների համադրման միջոցով վեր են հանում կոռուպցիոն ռիսկեր:</p>

Հարցաշար

« Հակակոռուպցիոն քաղաքականության հիմնահարցեր» առարկայի ստուգարքի

1. Հակակոռուպցիոն ռազմավարության հիմնական ուղղությունները, խոշոր միջոցառումները.
2. Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կարգավիճակը, գործառույթները, վարույթների իրականացումը.
3. Բարեվարքության համակարգը և բարեվարքության ստուգումը.
4. Գույքի, եկամուտների, շահերի հայտարարագրման սուբյեկտները, հայտարարագրման համակարգի առանձնահատկությունները.
5. Գույքի, եկամուտների, շահերի հայտարարագրերի վերլուծությունը, խնդիրների վերհանումը.
6. Ազդարարման տեսակները, գործիքները.
7. Կոռուպցիոն հանցագործությունների ցանկը.
8. Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման առանձնահատկությունները.